

Արձանագրություն

Մայիսյան գյուղական համայնքի ղեկավարի 2015 թվականի 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների հաշվետվությունից

Նախագահությամբ՝ Ս. Ղազարյանի

Քարտուղարությամբ՝ Մ. Աբգարյանի

Հաշվետու ժողովին մասնակցում էին համայնքի թվով 57 բնակիչներ և մարզպետարանի գյուղատնտեսության և բնության պահպանության վարչության պետ՝ պարոն՝ Ա. Այվազյանը:

Օրակարգում

Մայիսյան համայնքի ղեկավարի 2015 թվականի 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների մասին

Ջեկ.՝ համայնքի ղեկավար՝ Ե . Մովսիսյան

Հարգելի համագյուղացիներ, հարգելի պարոն Այվազյան, Մայիսյան համայնքում 2015թ. 1-ին կիսամյակում կատարվել են մի շարք աշխատանքներ՝ բյուջեի եկամուտների հաշվին:

Վաղ զարնանը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցություն» ծրագրի շրջանակներում ներկրված պարարտանյութ /1 պարկը 6000 դրամ/ և դիզելային վառելանյութ /1լ 350 դրամ/ տեղափոխվել է համայնք և տրվել բնակչությանը:

Համայնքում սանիտարահիգիենիկ մաքրությունը միշտ եղել է առաջնակարգ խնդիր, որի համար Ա/Ձ Աղասի Թորոսյանի հետ կնքվել է համայնքում աղբաթափություն կատարելու համար պայմանագիր և կատարված աշխատանքների համար փոխանցվել է 448.000 դրամ, ինչպես նաև աղբափոսերը ախտահանելու համար «ԱԲՆԱՐ ՄԵԴԻՔԱԼ» ՍՊԸ-ից ձեռք է բերվել քլորակիր, որի համար փոխանցվել է 60.000 դրամ:

Մայիսյան համայնքում գործող նախադպրոցական կրթական համակարգին որպես դրամաշնորհ փոխանցվել է 500.000դրամ:

Վերանորոգում է կատարվել համայնքի կենտրոնական և գյուղամիջյան փողոցների ճանապարհները, որի համար փոխանցվել է 1.000.000 դրամ:

ՀՀ և աշխատանքային վետերանների միավորման Արմավիրի տարածաշրջանային խորհրդին որպես օգնություն փոխանցվել է 20.000 դրամ:

Հայոց Մեծ Եղեռնի 100-ամյակի կապակցությամբ ծրագրվել և անցկացվել է մի շարք միջոցառումներ (Մայիսյան համայնքի միջև. դպրոցում և կուլտուրայի տանը), որի համար փոխանցվել է 350.000 դրամ:

2014թ. օգոստոսյան դիվերսիայի ժամանակ գոհված Սարգիս Մովսիսյանի ծննդյան օրվա առթիվ անցկացվել է միջոցառումներ՝ դպրոցում 6-րդ դասարանը անվանակոչվել է Սարգիս Մովսիսյանի անվամբ, որին մասնակցել է Արմավիրի մարզպետ պարոն Ա. Ղահրամանյանը և բազմաթիվ հյուրեր:

2015թ. 1-ին կիսամյակում «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության կողմից նկարահանվել է «Համայնքապատկեր» հաղորդաշարը Մայիսյան համայնքի վերաբերյալ, որի աշխատանքների համար փոխանցվել է 220.000 դրամ:

Մայիսյան համայնքից 2 կմ հեռավորության վրա է գտնվում Սարգիսի անվան թաղամասը, որտեղից 64 երեխաներ ձյան և անձրևի ժամանակ ոտքով հաճախում են Մայիսյանի միջնակարգ դպրոց, սակայն գյուղապետարանը հնարավորություն է ստեղծել երեխաներին օգտվելու երթուղային տրանսպորտից, ինչպես նաև դպրոցական երեխաների բուժզննման համար տրամադրել տրանսպորտային միջոց:

Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում են գտնվում Հայրենական Մեծ պատերազմի վետերանների և Արցախյան պատերազմում անհայտ կորած մայիսյանցիների ընտանիքները՝ ստանալով դրամական օգնություն:

Համայնքում գյուղապետարանի միջոցների հաշվին վերանորոգվել է տնամերձ հողամասերի ոռոգման խողովակները, որից օգտվում են 60 ընտանիքներ: Արմավիրի մարզպետ պարոն Ա. Ղահրամանյանի միջամտությամբ 2014թ. հորատված նոր խորքային հորը էլեկտրական ցանցին միացնելու համար համայնքի միջոցներից փոխանցվել է 1.941.000 դրամ:

2015թվականի 1-ին կիսամյակում համայնքի անապահով ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակն մեղմելու համար համայնքի բնակիչներին տրամադրվել է դրամական օգնություն 2.980.000 ընդհանուր գումարով:

2015 թվականի 1-ին կիսամյակում Մայիսյան համայնքում շարունակվել է փողոցների լուսավորության անցկացումը և Սազիսի անվան թաղամասում անցկացվել է լուսավորություն 600 զծամետր երկարությամբ:

Համայնքում առաջին կիսամյակում բյուջեի եկամուտները կազմում են՝

ա) Հողի հարկի գանձումներ՝ - 88.5%

բ) Գույքահարկի գանձումները՝ - 76.5%

Ավարտելով զեկույցը՝ Ե. Մովսիսյանը համայնքի բնակչությանը ցանկացավ բերքատատ տարի և անկորուստ բերքահավաք, որից և կախված է բնակչության բարեկեցիկ կյանքը:

Ելույթ ունեցան Հ. Հակոբյանը, Վ. Սարգսյանը, Հ. Միդոյանը, Հ. Մելքոնյանը, որոնք համայնքի ղեկավարի 2015 թվականի 1-ին կիսամյակում կատարված աշխատանքները գնահատեցին բավարար: Ելույթ ունենալով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնության պահպանության վարչության պետ՝ Ա. Այվազյանը ցանկացավ հողի հարկի և գույքահարկի գանձումները ժամանակին հավաքագրելու և հետագա աշխատանքները կատարելու և 1-ին կիսամյակում կատարված աշխատանքները գնահատեց բավարար:

Համայնքի հիմնախնդիրները

1. 30 հա տնամերձ հողամասերի համար խորքային հորի վերանորոգում
2. Մանկապարտեզի շենքի վերանորոգում
3. Մշակույթի տան վերանորոգումը

Հանձնաժողովի նախագահ՝



Ս. Ղազարյան

Քարտուղար՝



Ս. Արզարյան